



ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ «ԵՐԱՍԽԱՀՈՒՆԻ ՄԱՐՏԻԿ  
ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

<< 21 >> << 02 >> 2022 թ

Թիվ 68

ՀՀ Արմավիրի մարզպետ  
Պրն. Է. Հովհաննիսյանին

Հարգելի պարոն մարզպետ

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Երասխահունի Մ. Գևորգյանի անվան  
միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում հայտարարվում է ֆիզկուլտուրա  
(14 ժամ) և երգ (3 ժամ) առարկաների թափուր տեղի համար մրցույթ:

Առդիր 1 էջ

Տնօրեն



Կ. Մանուկյան

## Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ Արմավիրի մարզի «Երասխահունի Մ. Գևորգյանի անվ. միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրա (14 ժամ) և երգ (3 ժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

– Դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3x4 չափի,

– Բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթուղթ ( դիպլոմ),

– Անձը հաստատող փաստաթուղթ,

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում)

– Ինքնակենսագրություն (Ձև 5)

– Այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

– ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,

– Հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հաստատող փաստաթղթեր (առկայության դեպքում)

– Որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակը վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերը ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև փետրվարի 28 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա մարտի 3-ին՝ ժամը 14:00-ին «Երասխահունի Մ. Գևորգյանի անվ. միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում, հասցեն՝ Գ. Երասխահուն փ. 1, շենք 21 հեռ. 055220907:

Տեղեկությունների համար զանգահարել՝ 094189809 հեռախոսահամարով: